Նոյեմբ. 10. թ. 2058. Օրհնութեան թուղթ Ալէքսանդրապոլի Սահականուշեան օրիորդաց եկեղ. ծխ. դպրոցի աւագ վարժուհի Տիկ. Նատալիա Տէր Մարտիրոսոնի անունով հայ եկեղ. դպրոցներում նրա արդիւնաւոր պաշտօնէութեան 25 ամեայ յոբելեանի առիթով։

Նոյեմբ. 15. թ. 2068. Առաջադրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի Մատենադարանապետ Տ. Մեսրոպ եպսին. Սևանի անապատի երեք արկղ գրքերը պատուիրելով խնամքով պահպանել յանուն անապատի առանձին պահարանում։

Նոյեմբ. 15. թ. 2069. Առաջադրուեց Տպարանի Վարչութեան Սևանի վանահայր Տ. Սարգիս եպսի. խնդրած գրքերն ուղարկել նրան ցուցակի համեմատ։

Նոյեմբ. 21. թ. 2091. Առաջադրութեամբ յանձնուեց Սինոդին Մայր Աթոռիս Կ. Պոլսոյ գանձապահ պ. Բարսեղ Իսթամպօլլուեանի ուղարկած գանձանակագրամի հաշուում 109—10 կոպ. բանկային կտրոնը թ. 2092. այս մասին տեղեկութիւն տրուեց պ. Բ. Իսթամպօլլուեանին Կ. Պոլսոյ Հայոց պատր. Սրբազան Տեղապահի անունով գրութեամբ։

Նոյեմբ. 24. թ. 2103. Առաջադրութեամբ, հրաժարուած Տ. Ներսէս վրդպտ. Մելիք-Թանգեանի տեղ. կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւորներին ընդունող յանձնաժողովի անդամ կարգուեց Տ. Արիստակէս վրդպ. Զուլոյեանը։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Նոյեմբեր 2. թ. 732. Սինոդը լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի անցեալ հոկտեմբերի 8-ի №1967 առաջադրութիւնը Եղիշէ վարդապետ Ահարոնեանին Նուխու վիճակի փոխանորդ նշանակելու մասին. որոշեց. նախ՝ Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանին տալ 1910 թ. դեկտեմ-

բերի և 1911 թ. յունուարից մինչև ապրել ամիսների համար 500 ռուբլի փոխանորդական ռոճիկ, որ նա չի ստացել թիւրիմացութեամբ, և երկրորդ՝ որովհետև Տ. Տեղակալը նորան դարձեալ ուղարկում է Նուխի փոխանորդի պաշտօնով, ուստի նորա միաբանական ռոճիկը կարճել և տալ փոխանորդի ռոճիկ սկսած սոյն նոյեմբերի 1-ից։ Վճռիս մասին տալ տեղեկութիւն Ղարաբաղի Հայոց կոնսիստորիային, պատուիրելով հատուցանել Տ. Եղիշէ վարդապետին ճանապարհածախք և օրապահիկ համաձայն շրջաբերականի։

Նոյեմբերի 4. թ. 742 Սինոդը լսեց Երևանի կոնսիստորիայի տարեսոյ յունիսի 8-ի №4227 յայտարարութիւնը Երևանի գաւառի Արամուս գիւղացի Կարապետ Ստեփանեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Արամուս գիւղի բնակիչ Կարապետ Ստեփանեանին և առաջարկել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Երևանի գաւառի Աւան գիւղի համար։

Նոյեմբերի 4. թ. 742։ Սինոդը լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի անցեալ հոկտեմբերի 20-ի №2004 առաջադրութիւնը, որով յայտնում է, որ Կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւորների ընդունելութեան և հիւրասիրութեան համար կարգել է յանձնաժողով Մ. Աթոռի հետևեալ միաբաններից. նախագահ յանձնաժողովի՝ Սինոդի անդամ Տ. Բարգէն վարդապետ, անդամներ՝ Տ. Ներսէս վարդապետ և Տ. Աբել սրբազան և Յանձնաժողովին խորհրդակից ճեմարանի Տեսուչ Տ. Բագրատ վարդապետ և Մ. Աթոռի հիւրընկալ Տ. Սիոն վարդապետ, որոշեց, տալ յիշեալ յանձնաժողովին մի ժապաւինեալ մատեան մտից և ծախուց մանրամասն հաշիւները պահելու և ժամանակին Սինոդիս մատուցանելու համար։

Նոյեմբերի 4. թ. 743։ Սինոդը լսեց Երևանի կոնսիստորիայի անցեալ հոկտեմբերի 4-ի № 7346 յայտարարութիւնը Աղեքսանդրապոլի գաւառի Ղաչաղան գիւղացի

Եփրեմ Դաւթեանին (նոյն և Տէր Ստեփանեան) քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Ղաչաղան գիւղի բնակիչ Եփրեմ Դաւթեանին և առաջադրել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ նոյն գիւղի համար։

Նոյեմբերի 7. թ. 747։ Սինոդը լսեց Երևանի կոնսիստորիայի տարեւոյս օգոստոսի 30-ի № 6600 յայտարարութիւնը Էջմիածնի գաւառի Դովրի գիւղացի Վասակ Տէր Պետրոսեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Դովրի գիւղացի Վասակ Տէր Պետրոսեանին և առաջադրել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել քահանայ նոյն գիւղի համար։

Նոյեմբերի 7. թ. 749։ Սինոդը լսեց Վրաստանի Հայոց կոնսիստորիայի տարեւոյս յուլիսի 15-ի №3328 յայտարութիւնը Դանձա գիւղացի Ղազարոս Տէր Գրիգորեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Վրաստանի Հայոց կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Դանձա գիւղացի Ղազարոս Տէր Գրիգորեանին և առաջադրել Վրաստանի Հայոց թեմի ժամանակաւոր կառավարչին ձեռնադրել նորան քահանայ Ախալքալակի Ս. Խաչ եկեղեցու համար։

Նոյեմբերի 8. թ. 753։ Սինոդը լսեց Երևանի շրջանային դատարանի Պրոկուրորի 1911 թ. օգոստոսի 27-ի №6011 գրութիւնը, որով յայտնում է Սինոդին, թէ Տիգրան Գրիգորեան Մելիք.—Նուբարեանցի կտակը հաստատուած է և համաձայն կտակի 500 ռուբլի յատկացրած է Մ. Աթոռի Գէորգեան ճեմարանի օգտին, որոշեց. որովհետև Տիգրան Մելիք—Նուբարեանի կտակած 500 ռուբլին արդէն ստացուած է Սինոդում և յանձնուած Մ. Աթոռի գանձապահին ուսման գործը աւարտուած համարել։

Նոյեմբերի 8 № 755։ Սինոդը լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի անցեալ հոկտեմբերի 30-ի № 2027 մակագրու-

թեամբ Սինոդի տնօրինութեան յանձնուած Մ. Աթոռի միաբան Ուխտանէս վարդապետի խնդիրը, որով խնդրում է ազատ համարել իրան հոգևոր կուսակրօն կոչումից, որոշեց. Ուխտանէս վարդապետ Տ. Գասպարեանի խնդրի համաձայն ազատ համարել նորան Մ. Աթոռի միաբանութիւնից և իսպառ արձակել հոգևոր կոչումից։ Վճռիս մասին տալ տեղեկութիւն իրան Ուխտանէս վարդապետին Վրաստանի Հայոց կոնսիստորիայի ձեռքով և պատշաճաւոր մարմնաւոր իշխանութեան, նաև Մայր Աթոռի Վանական կառավարութեան։

Նոյեմբերի 11. թ. 763։ Սինոդը լսեց Աժենապատիւ Տ. Տեղակալի այս նոյեմբերի 1-ի №2035 առաջադրութիւնը Տ. Արտակ վարդապետին Նոր-Բայազետի գործակալ նշանակելու մասին, որոշեց. Տ. Տեղակալի առաջադրութեան համաձայն պատուիրել Մ. Աթոռի դանձապահին կարճել Տ. Արտակ վարդապետի միաբանական ռոճիկն ու սննդադրամը սոյն նոյեմբերի 1-ից, նորա Նոր-Բայազիտի գործակալ կարգուելու պատճառով։

Նոյեմբերի 16. թ. 770։ Սինոդը լսեց Աստրախանի կոնսիստորիայի տարեսյա ապրիլի 1-ի №1108 յայտարարութիւնը Եղեսիա աւանի եկեղեցու շինութեան մասին, որոշեց. թոյլ տալ Եդիսիայի եկեղեցու շինութեան հոգաբարձութեան ծախսել համախօսականով որոշուած 30,000 ռուբլի գումարը, տալով վճռիս մասին տեղեկութիւն յիշեալ հոգաբարձութեանը Աստրախանի կոնսիստորիայի ձեռքով։

Նոյեմբերի 25. թ. 789։ Սինոդը որոշեց. որովհետև օրինաց XI հատորի Իմ. 1122 յօդ. հիման վերայ առաջիկայ Կաթուղիկոսական ընտրութեանը մասնակցելու են, բացի Սինոդի բոլոր անդամներից, նաև Մայր Աթոռի միաբանութեան կողմից եօթ աւագ եպիսկոպոսների և այդ թիւը լրիւ չեղած դէպքում հրաւիրուում են աւագ վարդապետներից ուստի համաձայն յիշեալ օրէնքի ընտրութեանը մասնակցելու համար Մայր Աթոռի միաբաններից պատ-

գամաւոր ճանաչել Տ. Տ. Սուքիաս և Յովհաննէս Արքեպիսկոպոսներին, Բարդուղիմէոս, Ղեւոնդ և Աշոտ եպիսկոպոսներին և Համազասպ ու Գրիգորիս վարդապետներին։ Այս վճռի համար տեղեկութիւն տալ յիշեալ միաբաններին։ Տ. Համազասպ վրդ. տկարութեան պատճառով հրաժարուեց և նրա տեղ նշանակուեց Տ. Հմայեակ վրդ. Աբշարունի։

Նոյեմբեր 28-ին. Թ. 795. Սինոդը լսեց Ներքին Գործերի պ. Նախարարի անցեալի Հոկտեմբերի 12-ին № 9106 առաջադրութիւնը, որով յայտնում է, թէ Տփխիսի Նահանգապետը, հիմնուելով Տփխիսի Շրջանային դատարանի Պրոկուրորի գրութեան վերայ, տեղեկացրել է Նախարարութեանը. որ համաձայն տոհմական պատուաւոր քաղաքացի Պաւել Շադինովի կտակի, յատկացրած է Տփխիսի թեմական հոգևոր դպրանոցի օգտին 5000 ռուբլի, այն պայմանով, որ դրամագլուխը մնայ անձեռնմխելի, Պետրոս և Պօղոս Շադինեան եղբայրների անունով, իսկ տոկոսները գործադրուեն դպրանոցի օգտին։ Այդ պատճառով համաձայն X հատ. I մ. 981 յօդ., թոյլ տալով ընդունել այդ գումարը, պ. Նախարարը առաջադրում է Սինոդին պատշաճ կարգադրութիւն անել, որոշեց. Ներքին Գործոց Նախարարի գրութեան պատճէնը Վրաստանի Հայոց Կոնսիստորիային ձեռքով ուղարկել Տփխիսի Ներսիսեան դպրոցի Հոգաբարձութեան ի գիտութիւն և ի տնօրէնութիւն։

Նոյեմբեր 28-ին. Թ. 797. Սինոդը լսեց Աղէքսանդրապոլի փոխանորդ Տ. Ընձակ վարդապետի հրաժարական յայտարարութիւնը, որ իւր ծանր հիւանդութիւնը, պատճառելով՝ խնդրում էր իւր պաշտօնից արձակել. որոշեց ա. արձակել Տ. Ընձակ վարդապետին Աղէքսանդրապոլի փոխանորդութեան պաշտօնից, երկրորդ՝ նրան բժշկուելու հնարաւորութիւն տալու համար վեց ամիս ժամանակով տալ ամսական 100 ռուբլի, սկսած առաջիկայ դեկտեմբերի 1-ից և երրորդ՝ Աղէքսանդրապոլի Հոգևոր կառավարութեան կազմը լրացնելու մասին առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին։